

Հայտարարություն

Ռեստորանների Հայկական Միությունը նախաձեռնել է Հայաստանում գաստրոտուրիզմի եւ հանրային սննդի կազմակերպման ոլորտի զարգացման ծրագիր:

Այս շրջանակներում, որպես պիլոտային նախագիծ, 2019 թ. հուլիս ամսին Գեղարքունիքի մարզում նախատեսվում է կազմակերպել վերապատրաստման դասընթացներ հանրային սննդի ոլորտում աշխատող անձնակազմի համար:

Դասընթացները վարելու են Խոհարարական Արվեստի եւ Հյուրընկալության Ակադեմիայի բարձրակարգ ուսուցիչ մասնագետները:

Դասընթացներն անցկացվելու են առավոտյան ժամերին՝ տեսական եւ գործնական հատվածներով:

Դասընթացների տեւողությունը մեկ շաբաթ է, հաջողությամբ ավարտողներին տրվում է հավաստագիր:

Ռեստորանների Հայկական Միությունը ֆինանսավորում է նախագիծը եւ մասնակիցների համար դասընթացներն ԱՆՎՃԱԸ են:

Շահագրգիռ անձանց եւ կազմակերպություններին խնդրում ենք հաստատել իրենց մասնակցությունը ուղարկելով նամակ vahegevorgyan20@icloud.com էլեկտրոնային փոստին: